ԿՈՆՍՊԻՐՈԼՈԳԻԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ

ՎԱՀԱԳՆ ԳԱՍՊԱՐՅԱՆ

Նախաբան

2003 թվականին Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում կատարված հարցումների համաձայն՝ մասնակիցների 20 %-ը և մինչև 30 տարեկանների երեք հինգերորդը կարծում են, որ 2001 թվականի սեպտեմբերի 11-ի ահաբեկչական գործողությունների հետևում կանգնած է ԱՄՆ կառավարությունը[1]: 2004 թվականի հարցումներով Նյու Յորք քաղաքի բնակչության 50 %-ը կարծում է, որ ԱՄՆ իշխանությունները նախապես տեղյակ են եղել այդ ահաբեկչության մասին և միտումնավոր չեն կանխել[2]: 2006 թվականի Scripps-Howard-ի հարցման արդյունքներով ամերիկացիների մեկ երրորդը կարծում է, որ հավանական է կամ էլ խիստ հավանական է, որ ԱՄՆ ղեկավարությունը ակտիվորեն մասնակցել է ահաբեկչության նախապատրաստմանը կամ էլ, ունենալով տեղեկություն, թույլ է տվել դա, քանի որ ուզում էր պատերազմ սկսել Մերձավոր Արևելքում[3]: 2009 թվականին զանգվածային արձագանք ստացավ խոզի գրիպի (H1N1) դեմ պատվաստումը: Ամբողջ աշխարհով շրջանառության մեջ դրվեցին կոնսպիրոլոգիական այնպիսի տեսակետներ, համաձայն որոնց՝ այդ միջոցով ԱՄՆ հատուկ ծառայությունները փորձում են կրճատել մարդկության թվաքանակը կամ պատվաստման միջոցով մարդկանց միկրոչիպեր ներարկել[4]: 2017 թվականին Ֆրանսիայում անցկացված հարցումները ցույց տվեցին, որ ֆրանսիացիների 54 %-ի կարծիքով CIA-ն (ԿՀՎ - Կենտրոնական հետախուզության վարչություն) է կազմակերպել Ջոն Ֆիցջերալդ Քենեդու սպանությունը, ավելին, 10 ֆրանսիացիներից 8-ը հավատում է առնվազն մեկ կոնսպիրոլոգիական տեսության[5]:

Հայաստանում կոնսպիրոլոգիական տեսությունները (այսուհետ նաև ԿՏ) ոչ պակաս բազմազան և տարածված են: Թեև ՀՀ-ում դեռ չեն անցկացվել այս մասին հանրային կարծիքի հիմնարար ուսումնասիրություններ, այնուամենայնիվ կոնսպիրոլոգիական բնույթի դրույթնե-

---

[1] Տե՛ս «Panoply of the Absurd", Der Spiegel, September 8, 2003, online edition, www.spiegel.de/international/spiegel/0,1518,265160,00.html.

[2] Տե՛ս http://911truth.org/zogby-poll-50-percent-nyc-says-govt-knew/

[3] Տե՛ս https://en.wikipedia.org/wiki/Opinion_polls_about_9/11_conspiracy_theories

[4] Տե՛ս http://www.conspiracy-theories-hoax.com/swine-flu-conspiracy-theories.html

[5] Տե՛ս https://uk.news.yahoo.com/8-10-french-people-believe-conspiracy-theory-survey-152745449.html

ը և տեսությունները այնքան շատ են, որ վստահորեն կարելի է պնդել, որ մեր երկիրը ոչ միայն հետ չի մնում ԱՄՆ-ից և Եվրոպայից, այլև գուցե ինչ-որ իմաստով նաև գերազանցում է (սոցիալական ցանցերում, մասնավորապես Youtube-ում և Facebook-ում կան հայկական ծագման հարյուրավոր կոնսպիրոլոգիական տեսություններ), քանի որ Հայաստանում խիստ տարածված են ինչպես կոնսպիրոլոգիական տեսությունները մասոնների, տամպլիերների, սեպտեմբերի 11-ի ահաբեկչության, Քենեդու և արքայադուստր Դիանայի սպանությունների, պատվաստումների, համաշխարհային սիոնիզմի և այլնի մասին, այնպես էլ աշխարհի կոնսպիրատիվ դրույթներից որոշ չափով տարբերվող կոնսպիրոլոգիական տեսություններ: Կարելի է ենթադրել, որ հայաստանյան (ինչպես որոշ արևմտյան) կոնսպիրոլոգիական տեսությունները նկատելի աղերսներ ունեն անցյալի տրավմատիկ մի շարք իրադարձությունների հետ: Մասնավորապես առկա են կոնսպիրոգիական տարբեր տեսություններ ցեղասպանության, Սպիտակի երկրաշարժի և Սումգայիթի ջարդերի, հոկտեմբերի 27-ի վերաբերյալ: Ուշագրավ է, որ հայաստանյան մի շարք կոնսպիրոլոգիական տեսություններ ինքնաբերաբար ապաքողարկվեցին բոլորովին վերջերս տեղի ունեցած թավշյա հեղափոխության շնորհիվ: Այս թեմայի մանրամասն քննարկումը թողնելով ապագա ուսումնասիրություններին՝ հարկ ենք համարում ընդգծել այդպիսի կոնսպիրատիվ տեսություններից երկուսը:

1. Հայաստանում բողոքի զանգվածային ցույցերը լավ առիթ և հնարավորություն են Ադրբեջանի համար իրավիճակը սահմանին ապակայունացնելու, և ինչու չէ, նաև նոր պատերազմ սանձազերծելու համար: Հարյուրավոր անգամներ իշխանությունների կողմից չարչրկված այս կոնսպիրոլոգիական դրույթն օգտագործվել է միայն մեկ նպատակով՝ վախի մթնոլորտ սերմանելով՝ կասեցնել ժողովրդի արդար ցասումը և խաթարել ժողովրդավարական գործընթացների բնականոն ընթացքը: Փաստորեն դա եղել է Հայաստանի կիսաավտորիտար ռեժիմի (որը ձգտում էր լրիվ միահեծանության) գլխավոր զենքերից մեկը: Այն մի կողմից զսպել է ժողովրդական ընդվզումը, իսկ մյուս կողմից հասարակության առաջ «արդարացրել» ոչ իրավաչափ ուժի և բռնության կիրառումը (մարտի 1-ի արյունալի դեպքերի օրինակով): Իրականությունը, սակայն, այդ չարագուշակ «մարգարեությունների» ճիշտ հակառակն էր: Ադրբեջանը ոչ միայն չսկսեց պատերազմական գործողություններ, այլև, Հայաստանի միջազգային աճող հեղինակությանը զուգահեռ, գոնե առժամանակ սկսեց ավելի զգույշ քաղաքականություն վարել:

2. Ռուսաստանը (ռուսական իմպերիալիզմը) երբեք թույլ չի տա հեղափոխություն իրականացնել Հայաստանում: Այս կոնսպիրոլոգիական դրույթն ունի տարաբնույթ վարիացիաներ, ինչպես օրինակ՝ ԵԱՏՄ երկրներում հնարավոր չեն ժողովրդավարական անցնցում իշխանափոխություններ, կամ մինչև Ռուսաստանում քաղաքական փո-

փոխություններ չլինեն, այդպիսիք Հայաստանում և ԵԱՏՄ այլ երկրներում ևս բացառվում են և այլն: Այս կոնսպիրատիվ բնույթի տեսությունների հիմքում այն տեսակետն է ընկած, որ Հայաստանը չունի անկախ կառավարում, ուստի որևէ ժողովրդական ընդվզում ապարդյուն է և նույնիսկ վտանգավոր, քանի որ ամենակարևոր որոշումներն ընդունվում են ոչ թե Հայաստանում, այլ Ռուսաստանում: Այս տեսությունը ևս բազմիցս օգտագործվել է իշխանությունների կողմից: Վերջիններս կամա թե ակամա փորձել են ամեն ինչ անել, որ այս ենթադրություններն ամրապնդվեն ժողովրդի շրջանում (բանտարկելով և խիստ պատիժներ սահմանելով հակառուսական տրամադրությամբ որոշ գործիչների նկատմամբ, մեկ օրում կտրուկ քաղաքական շրջադարձեր կատարելով և այլն): Պետք է, սակայն, ընդգծել, որ այս կոնսպիրոլոգիական տեսությունը բացառապես պրագմատիկ քաղաքական հաշվարկի արդյունք չէ: Հարյուրավոր մարդիկ, որոնք առաջին հայացքից որևէ կապ չեն ունեցել իշխանությունների հետ, անգամ իսկ որոշ քաղբանտարկյալներ հանդես են եկել որպես այս մոտեցումների ակտիվ կողմնակիցներ ու քարոզիչներ (վերջիններս այժմ post factum փորձում են մասամբ վերախմբագրել իրենց մոտեցումները): Սա խիստ կարևոր հանգամանք է, քանի որ կոնսպիրոլոգիական տեսություններն այսքան տարածված են ոչ միայն այն պատճառով, որ դրանք ունեն որոշակի քաղաքական կամ տնտեսական պատվիրատուներ, որոնք անընդհատ քարոզում են դրանք, այլև կարող են քարոզվել «սովորական» կամ «շարքային» մարդկանց կողմից: Ուշագրավ է նաև, որ խորհրդարանում մեծամասնություն ունեցող քաղաքական ուժը խորհրդարանական լսումների ժամանակ ժողովրդի աջակցությունը վայելող վարչապետի թեկնածուին ուղղված ողջ քննադատությունը կառուցեց այս երկու՝ ղարաբաղյան և մոսկովյան (ռուսաստանյան) կոնսպիրոլոգիական առանցքների շուրջ:

Վերոնշյալներն այն հազարավոր կոնսպիրոլոգիական տեսություններից մի քանիսն են, որոնք բնորոշ են ժամանակակից աշխարհին: Այսպիսով, պատահական չէ, որ վերջին տարիներին կոսնսպիրոլոգիական տեսությունների թեման դարձել է ամենաքննարկվողներից մեկը սոցիալ-հումանիտար գիտակարգերում: Սակայն շատ երկար ժամանակ կոնսպիրոլոգիական տեսությունները կա՛մ անտեսվել են գիտական շրջանակներում, կա՛մ խիստ քննադատության ենթարկվել և չեն դիտարկվել որպես գիտական ուսումնասիրության արժանի երևույթներ: Սույն հոդվածը առկա քննադատական մոտեցումները ներկայացնելու փորձ է և միտված է մատնանշելու այդ քննադատություններում տեղ գտած թերությունները և փաստելու դրանց միակողմանիությունը: Հոդվածի առաջնային նպատակներից է նաև Հայաստանի գիտական հանրության ուշադրությունը հրավիրել մինչ այժմ չուսումնասիրված (սակայն մեր կարծիքով չափազանց կարևոր) կոնսպիրոլոգիական

մշակույթի հետազոտական խնդիրների վրա, որոնք արևմտյան առաջատար համալսարաններում և հասարակական շրջանակներում վաղուց դարձել են ծավալուն հետազոտությունների առարկա:

Կոնսպիրոլոգիական տեսություններին վերաբերող քննադատական մոտեցումները

Կոնսպիրոլոգիական տեսությունների մասին առաջին քննարկումները սկսվել են 20-րդ դարի կեսերին: Այս հիմնախնդրի քննարկման նախակարապետներն են Կարլ Պոպերը[6] և Ռիչարդ Հոֆսթադթերը[7], որոնց մոտեցումները մնացել են բացառապես քննադատության շրջանակներում: Մասնավորապես Պոպերը, անդրադառնալով կոնսպիրոլոգիաներին, նշում է, որ «…սոցիալական գիտությունների ճշմարիտ նպատակին խիստ հակառակ, ես այդպես եմ անվանում հասարակության կոնսպիրոլոգիական տեսությունները, որոնք ծագում են այն սխալ կանխադրույթից, թե այն, ինչ կատարվում է հասարակությունում՝ պատերազմ, գործազրկություն, ազքատություն, սղություններ, հետևանք է որոշ ազդեցիկ մարդկանց կամ խմբերի չմիջնորդավորված պլանավորման»[8]: Իսկ Հոֆսթադթերը կոնսպիրոլոգիան մեկնաբանում է պարանոյայի համատեքստում՝ այն համարելով վտանգ քաղաքականության և ժողովրդավարության համար[9]: Կոնսպիրոլոգիական տեսությունների վերաբերյալ հետազոտությունները, սակայն, սկսվում են միայն 20-րդ դարի վերջին տասնամյակում և հիմնականում Միացյալ Նահանգներում: Ընդ որում՝ ԿՏ-ով հետաքրքրվում են ամենատարբեր գիտակարգեր, մասնավորապես՝ քաղաքագիտությունը, մարդաբանությունը, հոգեբանությունը, փիլիսոփայությունը, սոցիոլոգիան, իրավագիտությունը, մշակութաբանությունը, պատմագիտությունը, կրոնագիտությունը և այլն:

Ըստ էության՝ սոցիալ-հումանիտար գիտակարգերում կոնսպիրոլոգիական տեսությունները պետության, քաղաքականության և հասարակության համար հաճախ համարվել են իռացիոնալ, պաթոլոգիկ և վտանգավոր[10] կամ «փչացած դիսկուրս» (a poisoned discourse)[11]: Հարամբամը, ընդհանրացնելով եղած քննադատական մոտեցումները, առանձնացնում է կոնսպիրոլոգիական տեսությունների վերաբերյալ երեք հիմնական ուղղություններ՝ ա) ԿՏ-ն որպես վատ գի-

---

[6] Տե՛ս **Popper K. R.** (2013). The Open Society and its Enemies. Princeton, NJ: Princeton University Press:

[7] Տե՛ս **Hofstadter R.** (1996). The Paranoid Style in American Politics and Other Essays. New York, NY: Knopf:

[8] **Popper K. R.,** նշվ. աշխ., էջ 306:

[9] Տե՛ս **Hofstadter R.,** նշվ. աշխ., էջ 3:

[10] Տե՛ս **Aupers S.** (2012) «Trust no one»: Modernization, paranoia and conspiracy culture. European Journal of Communication, 26(4): 22–34, էջ 22:

[11] **Pipes D.** (1997) Conspiracy: How the Paranoid Style Flourishes and Where it Comes From. New York: The Free Press, էջ 173:

տություն, բ) ԿՏ-ն որպես պարանոյա և գ) այս երկուսի միակցումը՝ կա՛մ ԿՏ-ն որպես հասարակական վտանգ, կա՛մ չարիք[12]: Այժմ փորձենք հակիրճ ներկայացնել այս քննադատական մոտեցումներն առանձին-առանձին:

Ա) *Կոնսպիրոլոգիական տեսությունները որպես վատ գիտություն*: Ինչպես Բարկունն է նշում. «…փաստի և ֆիկցիայի միջև առկա տրամաբանական տարբերությունը կորչում է կոնսպիրոլոգի աշխարհում»[13]: Ըստ Հոֆսթադթերի՝ կոնսպիրոլոգիական տեսությունը կարող է «…սկսվել որոշ արդարացի դատողություններից…»[14], բայց այն հաճախ ավարտվում է «...երևակայության հետաքրքիր թռիչքով»[15] և ֆանտաստիկայի ժանրին բնորոշ էական տարրերի ավելացմամբ: Մի կողմից՝ կոնսպիրոլոգիական տեսություններում բաղադրյալ ու բարդ խնդիրները հանգում են շատ պարզ պատճառների[16], բայց մյուս կողմից էլ «դավադրության տեսությունները պահանջում են, որ խաբեության շղթան լինի չափազանց բարդ, սարսափելի խելամիտ և մեղսակիցների այնպիսի մեծ քանակով, որ ամբողջ սխեման փլվում է իր իսկ անհավանական լինելուց»[17]: Այսպիսով, կոնսպիրոլոգիական տեսությունները ճշմարտանման թվալու համար մի կողմից չափազանց բարդացված են, մյուս կողմից էլ չափազանց պարզեցված: Ընդհանրացնելով նշենք, որ համաձայն այս մոտեցման՝ կոնսպիրոլոգիական տեսություններն իսկապես աղերսներ ունեն իրականության հետ և նույնիսկ կարող են ինչ-որ չափով հենվել իրական փաստերի ու ճշմարիտ դատողությունների վրա, սակայն դրանց մեկնաբանման կամ նկարագրման ինչ-որ փուլում դրանք սկսում են ակնհայտորեն աղճատվել, չափազանցվել և գերընդհանրացվել, այսինքն՝ ի տարբերություն «լավ գիտության» (գիտնականները), որը փոձում է ամեն ինչ անել պահպանելու այսպես կոչված գիտական «օբյեկտիվությունը», կոնսպիրոլոգիական տեսությունները կամ «վատ գիտությունը» (կոնսպիրոլոգները) տրվում են երևակայությանը և փաստերի չափազանց կամայական մեկնաբանության գայթակղությանը:

Բ) *Կոնսպիրոլոգիական տեսությունները որպես «պարանոյա»*: Ինչպես նշում է Աուփերսը, ««պարանոյան» այլևս ուղղակի հոգեբանների և հոգեբույժների կողմից ընդունված ախտորոշիչ պիտակավորում չէ»[18]: Այն արդեն ճանաչված սոցիալական փաստ է և սոցիոլոգիա-

---

[12] Տե՛ս **Harambam J.** (2017) "The Truth Is Out There" Conspiracy Culture in an Age of Epistemic Instability. Erasmus University Rotterdam, էջ 11:

[13] **Barkun M.** (2006) A Culture of Conspiracy: Apocalyptic Visions in Contemporary America. Berkeley, CA: University of California Press. p. 29.

[14] **Hofstadter R.,** նշվ. աշխ., էջ 36:

[15] Նույն տեղում:

[16] Տե՛ս **Barkun M.,** նշվ. աշխ., էջ 7:

[17] **Pipes D.,** նշվ. աշխ., էջ 39:

[18] **Aupers S.,** նշվ. աշխ., էջ 23:

կան ֆենոմեն[19]: Նրա կարծիքով՝ «ոչինչ այն չէ, ինչ թվում է» կոնսպիրատիվ բնույթի կարգախոսը չափազանց տարածված է կոնսպիրոլոգների շրջանում[20]: Ինչպես նկատում է Բիֆորդը, հաճախ նաև կարող է թվալ, որ «պարանոյա» և «կոնսպիրոլոգիական մտածողություն» հասկացությունները ժամանակակից աշխարհում հոմանիշներ են[21]: «Պարանոիդալ ոճում կենտրոնական է հետապնդման զգացողությունը, և դա իսկապես համակարգված է կոնսպիրոլոգիական մեծ տեսություններում»[22]: Վերջին տասնամյակում մի շարք հետազոտական խմբերի կատարած ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ կոնսպիրոլոգիական բնույթի հավատքը խիստ զուգորդվում է պարանոիդալ մտածողության և շիզոտիպության հետ[23]: Եվրոպայում՝ մասնավորապես Լեհաստանում կատարված հետազոտությունների տվյալները ևս հստակ ընդգծում են կոնսպիրոլոգիական մտածողության և պարանոյայի միջև կապը[24]: Ամփոփելով կարող ենք նշել, որ այս մոտեցման կողմնակիցները կոնսպիրոլոգիական մտածողությունը տեղավորում են գլխավորապես ախտաբանական դաշտում և այն դիտարկում որպես ախտաբանական երևույթ՝ անկախ այն բանից, թե որ հարթությունում է՝ հոգեկա՞ն, թե՞ սոցիալական:

Գ) *Կոնսպիրոլոգիական տեսությունները որպես սոցիալական վտանգ*: «Կոնսպիրոլոգիականությունը այն հիմնական բաղադրիչն է, որը բնորոշ է խտրական, հակաժողովրդավարական և ամբոխահաճության քաղաքականությանը, հետադիմական ռեժիմներին հատուկ առևտրաշուկայական հռետորաբանությանը և եղել է հակասեմիտականության հավատարիմ գործընկերը: Կոնսպիրոլոգիական տեսությունները մնում են աշխարհի յուրաքանչյուր բռնապետի և ավտորիտար առաջնորդի ապաստանը»[25]: Ավելին, ԿՏ-ն կարող է մղել իրական ռիսկերի և դառնալ հանցագործությունների պատճառ[26], քանի որ կոնսպիրոլոգները ստեղծում են սոցիալական վտանգավոր դինամիկա, որը թունավոր է ժողովրդավարության համար[27]: Փաստորեն, այս քննադա-

---

[19] Տե՛ս նույն տեղը, էջ 23:

[20] Տե՛ս նույն տեղը, էջ 27:

[21] Տե՛ս **Byford J.** (2011) Conspiracy Theories: A Critical Introduction. London: Palgrave Macmillan, էջ 121:

[22] **Hofstadter R.,** նշվ. աշխ., էջ 3-4:

[23] Տե՛ս **Darwin H., Neave N., and Holmes J.** (2011) Belief in Conspiracy Theories. The Role of Paranormal Belief, Paranoid Ideation and Schizotypy. Personality and Individual Differences, 50: 1289–1293, էջ 1292, տե՛ս նաև **Barron D., Morgan K., Towell T., Altemeyer B., and Swami V.** (2014) Associations between schizotypy and belief in conspiracist ideation. Personality and Individual Differences, 70, էջ 156-159:

[24] Տե՛ս **Grzesiak-Feldman M. & Ejsmont A.** (2008) Paranoia and Conspiracy Thinking of Jews, Arabs, Germans and Russians in a Polish Sample. Psychological Reports 102, էջ 884-886:

[25] **Byford J.,** նշվ. աշխ., էջ 144:

[26] Տե՛ս **Sunstein C. R. and Vermeule A.** (2009) Conspiracy theories: Causes and cures. The Journal of Political Philosophy, 17(2), էջ 202–227:

[27] Տե՛ս **Berlet C.** (2009) Toxic to Democracy: Conspiracy Theories, Demonization & Scapegoating. Somerville, MA: Political Research Associates, էջ 7:

տական մոտեցման հիմքում ընկած է այն գաղափարը և փորձառությունը, որ կոնսպիրոլոգիական տեսությունները ստեղծվել և օգտագործվել են ժողովրդին խաբելու, հիմարացնելու, անհանդուրժողականություն ու թշնամանք սերմանելու և ժողովրդավարական արժեքների վրա բռնանալու համար: Հետևապես այս մոտեցման կողմնակիցները եզրակացնում են, որ կոնսպիրոլոգիական տեսություններն էական վտանգ են ներկայացնում առողջ և ժողովրդավարական հասարակությունների համար: Ուշագրավ է այն հանգամանքը, որ կոնսպիրոլոգիական տեսությունները բավականին տարածված են հետխորհրդային հանրապետություններից շատերում՝ Ռուսաստանում, Ուկրաինայում, Հայաստանում և այլն: Դրանք նաև մեծապես բնութագրում են հարևան Ադրբեջանի իշխանությունների վարած քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ: Այդ քաղաքականությունը կոնսպիրատիվ բնույթի է, և դրա գլխավոր նպատակը սեփական երկրում մի կողմից ժողովրդավարական արժեքների ճնշումն է, իսկ մյուս կողմից անհանդուրժողականության, թշնամանքի և հակահայկականության քարոզչությունը ոչ միայն սեփական երկրում, այլև միջազգային մակարդակում: Այդ կոնսպիրատիվ քաղաքականությամբ են ոչնչացվում հայկական պատմամշակութային հուշարձանները և կեղծվում պատմական փաստերը (ինչպես, օրինակ, Երևանի դեպքում, որը ներկայացվում է որպես միջնադարյան ադրբեջանական քաղաք):

Քննադատական մոտեցումների քննադատության փորձ

Չնայած հիշյալ երեք քննադատական մոտեցումներն ունեցել են ահռելի նշանակություն կոնսպիրոլոգիական հետազոտությունների նախնական փուլում, սակայն հատկապես վերջին շրջանում դրանք ենթարկվում են լուրջ քննադատության իրենց գերընդհանարացվածության և բարոյախրատական բնույթի համար: Ակնհայտ է, որ կոնսպիրոլոգիականությունը այսօրվա աշխարհի ամենատարածված և կարևոր սոցիալական, հոգեբանական, գաղափարական խնդիրներից մեկն է, և մենք, այն պիտակավորելով և ախտաբանական կամ վտանգավոր որակելով, չպետք է անտեսենք կամ հրաժարվենք դրա ուսումնասիրություններից: «Քանի դեռ մենք բացահայտում ենք չմիջնորդավորված մոգական ազդեցություններ իրականության մեջ, ապա կոնսպիրոլոգիական տեսությունները չեն կարող ուղղակի ախտաբանական համարվել ձեռքի անհիմն մի շարժումով»[28], - նշում է Մելեյը: Ավելին, սոցիալ-հումանիտար գիտնականի համար չի կարող կասկածելի չթվալ այսպիսի «գիտական անհանդուրժողականությունը», և ինչ-որ առումով նաև տագնապը (եթե չասենք վախը) սոցիալական ֆենոմենի հանդեպ (սա չափազանց ուշագրավ հանգամանք է, որը արժանի է առանձին անդրադարձի):

[28] **Melley T.** (2000) Empire of Conspiracy: The Culture of Paranoia in Postwar America. Ithaca, NY and London: Cornell University Press, p. 13.

Այժմ փորձենք պարզել, թե որքանով են արդարացի կոնսպիրոլոգիական տեսություններին ուղղված գիտական քննադատությունները, և արդյո՞ք դրանք չունեն էական թերություններ: Այս քննադատությունների ուշադիր դիտարկումը թույլ է տալիս նկատել, որ դրանք հեշտությամբ կարելի է քննադատել իրենց իսկ բերած փաստերով և քննադատություններով, ավելին՝ հաճախ այդ քննադատությունները չեն կարող բավարարել գիտականությանը ներկայացվող պահանջներին:

Ա) ԿՏ-ն որպես վատ գիտություն: Այս քննադատական մոտեցման հեղինակները կարծում են, որ կոնսպիրոլոգիական տեսությունները բավականաչափ հիմնավորված ու փաստարկված չեն, մասամբ երևակայական են, այլ կերպ՝ «գիտական» չեն: Այս քննադատությունը իր բնույթով բարոյախրատական է և ոչ թե գիտական: Գիտական քննադատության կարելի է ենթարկել գիտական դրույթները, հայեցակարգերը, տեսությունները, բայց ոչ սոցիալ-հոգեբանական ֆենոմենները: Ակնհայտ է նաև, որ ոչ բոլոր կոնսպիրոլոգիական տեսություններն են անհավանական և երևակայական, ուստի այս քննադատական մոտեցումների ընդհանրացումները կամայական են և հաճախ չհիմնավորված: Ավելին, այդ քննադատությունները չունեն բավարար էմպիրիկ հետազոտական հենք, ինչպես նաև դրանք չեն համապատասխանում գիտական տեսություններին հատուկ նենգափոխումների սկզբունքին: Ուստի ակնհայտ է, որ ոչ միայն որոշ կոնսպիրոլոգիական տեսություններ, այլև դրանց ուղղված մի շարք քննադատություններ բավարար փաստարկված և հիմնավորված չեն:

Բ) ԿՏ-ն որպես «պարանոյա»: Այս տեսության կողմնակիցները կոնսպիրոլոգիական տեսությունները դիտում են ախտաբանական հարթությունում և այն կապում «պարանոյայի» հետ: Նույնիսկ եթե այս ֆենոմենը դիտարկենք ախտաբանական հարթությունում, ապա դա դեռ բավարար հիմնավոր պատճառ չէ, որ այն չուսումնասիրվի: Հակառակը, եթե կոնսպիրոլոգիական տեսությունները «առողջ չեն» և միաժամանակ այսքան տարածված են, ուրեմն առավել ևս դրանք պետք է դառնան լայնածավալ հետազոտությունների առարկա՝ մի կողմից դրանց տարածվածության, իսկ մյուս կողմից դրանց «վտանգավորության» պատճառով: Բայց այստեղ կա շատ ավելի էական, մեթոդաբանական խնդիր: Չնայած թվացյալ նմանությանը, այդ ինչպե՞ս են որոշել, թե որ տեսություններ են պարանոիդալ, իսկ որոնք ոչ (նորմայի և ախտաբանականի միջև անցնող սահմանագիծը չափազանց դժվար է որոշել: Այդ սահմանը անընդհատ փոխել է իր տեղը՝ կախված ժամանակաշրջանից, տեղի մշակույթից և գերիշխող գաղափարախոսությունից): Մյուս կողմից էլ նման կպչուն և չափազանց անառարկելի քննադատությունը իր հերթին կարող է դիտվել որպես պրոյեկտված «պարանոյա»: Այս քննադատություններն ակնհայտորեն չափազանցված են,

գույները՝ խտացված, ինչը ևս բնորոշ է պարանոիդալ մտածողության ոճին: Ճիշտ է, այն, որ ինչ-որ մեկը պարանոյիկ է, դեռ չի նշանակում, որ նրան չեն հետևում, նույն կերպ էլ այն, որ այս քննադատություններն իրենք էլ ունեն պարանոիդալ ոճ, դրանք չեն դարձնում սխալ, բայց այդ դեպքում մենք պետք է հիշենք, որ կոնսպիրոլոգիական տեսություններն էլ եթե ոճով նման են պարանոիդալ զառանցանքին, դեռ չի նշանակում, որ դրանք կեղծ են կամ խաբեություն կամ էլ ախտաբանական դրսևորում: Բայց կա ևս մեկ իրողություն ընդդեմ այս մոտեցման, և այն անուղղակիորեն առաջարկել են քննադատական երրորդ մոտեցման հեղինակները: Մենք չպետք է մոռանանք, որ կոնսպիրոլոգիական տեսությունները հաճախ սպասարկել են և դեռ կսպասարկեն քաղաքական և տնտեսական խաղացողների շահերը (վերևում բերված մեր օրինակներից մեկը լավագույնս հաստատում է այս իրողությունը): Սա նշանակում է, որ թեև գուցե ոչ բոլոր կոնսպիրոլոգիական տեսություններն են ստեղծվում ռացիոնալ պատճառներով, բայց և այնպես դրանց մի մասը ստեղծվել է ռացիոնալ նպատակներով և փորձում է լուծել իր առջև դրված հստակ և իրական խնդիրներ:

Գ) ԿՏ-ն որպես սոցիալական վտանգ: Այս տեսության կողմնակիցները համարում են, որ կոնսպիրոլոգիական տեսությունները վտանգավոր են և թունավոր ժողովրդավարական գործընթացների, ինստիտուտների և հասարակության համար, քանի որ դրանք սերմանում են անհանդուրժողականության, վախի, ատելության ու թշնամանքի մթնոլորտ և շատ հաճախ օգտագործվել են բռնակալական և տոտալիտար ռեժիմներում: Չնայած վերջին պնդման ճշմարտացիությանը, այնուամենայնիվ հարց է առաջանում, արդյո՞ք ԿՏ-ները կարող են իրական ռիսկ պարունակել ժողովրդավարության համար: Չպետք է մոռանալ, որ, օրինակ, թեև Ֆրանսիայի Հանրապետությունը եվրոպական առաջատար ժողովրդավարական պետություններից մեկն է, բայց և այնպես ֆրանսիացիների շուրջ 80 %-ը հավատում է առնվազն մեկ կոնսպիրոլոգիական տեսության: Փաստորեն, կոնսպիրոլոգիական տեսությունները չափազանց տարածված են նաև այնպիսի դեմոկրատական երկրներում, ինչպիսին են Ֆրանսիան, Գերմանիան, Նիդերլանդները և ԱՄՆ-ն: Ուստի, ակնհայտ է, որ թեպետ կոնսպիրոլոգիական տեսությունները բռնակալների և հակաժողովրդավարական տարրերի կողմից հաճախ կիրառվող գործիքներ են, այնուամենայնիվ դրանց վտանգավորությունը հասարակության և ժողովրդավարության համար ևս չափազանցված է: Այստեղ բացահայտվում է կոնսպիրոլոգիական տեսությունների խիստ կարևոր առանձնահատկություններից մեկը: Կոնսպիրոլոգիական տեսությունները բնորոշ են ամենատարբեր հասարակությունների և մշակույթների (ինչպես օրինակ՝ հայկականին, ադրբեջանականին, ռուսականին, եվրոպականին, ամերիկյանին և այլն): Այս հսկայական նշանակության հանգամանքը դարձնում է

կոնսպիրոլոգիական հետազոտությունների ուսումնասիրությունների խնդիրը խիստ կարևոր և առանցքային սոցիալ-հումանիտար գիտակարգերում:

Ամփոփելով կարող ենք նշել, որ ԿՏ-ի վերաբերյալ առկա քննադատությունները կարծրատիպային են և պարունակում են անհիմն ընդհանրացումներ: Այդ քննադատությունները բնույթով մասամբ երևակայական են: Հասկանալի է նաև, որ կոնսպիրոլոգիական տեսություններին ուղղված չափազանց խիստ և անհիմն կոշտ քննադատությունը չի կարող դրանք բացառել ժամանակակից աշխարհից, և նման մոտեցումներն ամենևին չեն կարող նպաստել խնդրի իրական ուսումնասիրմանը և ըմբռնմանը: Ուստի այս սոցիալական ֆենոմենն առավել լավ հասկանալու համար պետք է ավելի խորությամբ «ուսումնասիրենք կոնսպիրոլոգիական մշակույթի նշանակությունը միաժամանակ թե՛ նրանց համար, ովքեր ստեղծում են դրանք և թե՛ նրանց համար, ովքեր սպառում են դրանք»[29]: Այսպիսով՝ ակնհայտ է, որ կոնսպիրոլոգիական տեսությունների քննադատությունները թեև պատմական մի կարճ ժամանակահատվածում ունեցել են որոշակի գիտական նշանակություն, սակայն այսօր դրանք անպտուղ են: Կոնսպիրոլոգիական տեսությունների բարդագույն երևույթն իրապես հասկանալու համար մեզ անհրաժեշտ են համակողմանի, նորարարական և փորձարարական հենքով ուսումնասիրություններ, և վստահաբար կարելի է պնդել, որ կոնսպիրոլոգիական մշակույթի լայնածավալ հետազոտությունները և բացահայտումները դեռ առջևում են:

Բանալի բառեր – *կոնսպիրոլոգիա, կոնսպիրոլոգիական տեսություններ, կոնսպիրոլոգիական մշակույթ, սոցիալական գիտություններ, պարանոյա, ժողովրդավարություն, սոցիալական վտանգ*

ВААГН ГАСПАРЯН – *О критике конспирологических теорий.* – В статье отмечается важность исследовать конспирологическую культуру, поскольку конспирологические теории находят в последнее время широкое распространение. Актуальность этой темы подтверждает среди прочего «бархатная революция» в Армении. Рассматриваются основные критические линии социально-гуманитарных наук касательно конспирологических теорий и выявляются их недостатки. Автор показывает односторонность и необоснованность этой критики и пытается обосновать уникальность проблемы конспирологических теорий и необходимость новых, инновационных и эмпирических исследований конспирологической культуры.

Ключевые слова: *конспирология, конспирологические теории, конспирологическая культура, социальные науки, паранойя, демократия, социальная опасность*

[29] **Knight P**. (2000) Conspiracy Culture: From Kennedy to the X-Files. London and New York: Routledge. p. 22.

VAHAGN GASPARYAN – ***On the Criticism of Conspirology Theories.*** – The article highlights the importance of the study of conspiracy culture. The author of the article notes the wide dissemination of conspirology theories and substantiates the relevance of this topic, including in the framework of the velvet revolution in Armenia. The main critical lines of social and humanitarian sciences are discussed against conspirology theories and their shortcomings are revealed. The author shows the one-sidedness and the invalidity of that criticism and tries to substantiate the uniqueness of the problem of conspirology theories and the need for new, innovative and empirical based studies on conspirology culture.

Key words: *conspirology, conspirology theories, conspirology culture, social sciences, paranoia, democracy, social danger*